

Արտադասարանային ընթերցանություն: 9-րդ դասարան:
«Յուրաքանչյուր մարդ պետք է գնա իր երազանքի հետևից»:
/ Ըստ Պ. Կոեյոյի «Ալքիմիկոսը» վեպի:/

«Հասնել երազանքի իրականացմանը. սա է մարդու մեն-միակ պարտականությունը»:

Պ. Կոեյոյ

Դասի ընթացքը

Ուսուցչի խոսքը

Երեխաներ, դուք գիտե՞ք Նարգիզի՝ այն գեղեցկադեմ երիտասարդի պատմությունը, որը ամբողջ օրը գնում էր մոտիկ առվի ափը՝ հիանալու իր արտացոլանքով:

Ի՞նչ եղավ նրա հետ:

Նա այնքան զմայլվեց իրենով, որ մի օր էլ ընկավ ջուրը ու խեղդվեց, և առվի ափին մի ծաղիկ աճեց, որին տվեցին Նարգիզ անունը:

Բայց Անգլիացի գրող Օսկար Ուայլդը այդ պատմությանը տվել է ինքնատիպ մեկնաբանություն:
Լսենք այն:

« Երբ Նարգիզը մեռավ, եկան անտառի աստվածները՝ ոգիները, և տեսան, որ քաղցրահամ առուն արցունքից աղի է դարձել:

- Ինչու՞ ես լալիս , - հարցրին ոգիները:

- Լալիս եմ Նարգիզի համար, - պատասխանեց առուն:

- Ձարմանալի չէ, որ լալիս ես Նարգիզի համար, - ասացին անտառի աստվածները: - Չնայած մենք բոլորս ամեն օր վազում էինք նրա հետևից այս սիրուն անտառով, ի վերջո, դու միակն էիր, որ կարող էիր մոտիկից զմայլվել նրա գեղեցկությամբ:

- Իսկ Նարգիզը գեղեցիկ էր , - հարցրեց առուն:

- Ո՞վ կարող է այդ բանն իմանալ ավելի լավ, քան դու, - պատասխանեցին ոգիները: - Չէ՞ որ նա էր, վերջապես, որ ամեն օր խանարիվում էր քո ջրերի վրա:

Առուն երկար մտածելուց հետո ասաց.

- Ես լալիս եմ Նարգիզի նամար, որովհետև ամեն անգամ, երբ նա ծնկի էր գալիս իմ ափին, ես նրա աչքերի խորքում տեսնում էի իմ գեղեցկության արտացոլումը:

Այս հրաշալի պատմությամբ է սկսվում բրազիլացի գրող Պ. Կոեյոյի «Ալքիմիկոս»-ը վեպը, որի տիրաժը 10.000.000 օրինակից ավելի է, վեպ, որն անվանեցին տարվա գիրք, անսահման նրբագեղության հիասքանչ օրինակ:

Պաուլո Կոեյո- Ինչպիսի՞ գրող է նա: Ինչու՞ մենք անդրադարձանք հենց նրա ստեղծագործությանը: Լսենք տեղեկություններ նրա կյանքի ու ստեղծագործության մասին:

Կոելյոյի կյանքը և ստեղծագործությունը Լույսի, Արևի, Բարու որոնման ճանապարհ է եղել: Ծնվել է 1947թ.-ին Ռիո-դե-ժանեյրոյում ինժեների ընտանիքում: Նա մանկուց երազում է դառնալ բանաստեղծ: Բայց 60-ական թթ.-ին Բրազիլիայում արվեստը արգելված էր զինվորական դիկտատուրայի կողմից: Փորձելով պաշտպանել իշխանությունների հետապնդումներից՝ ծնողները 17-ամյա Պաուլոյին ուղարկում են հոգեբուժական հիվանդանոց: Հիվանդանոցից դուրս գալուց հետո նա դառնում է հիպպի և տարվում ընթերցանությամբ. կարդում է Մարքսից մինչև Բիավատ-գիտ: Ապա աշխատակցում է մի ամսագրի, որտեղ քննարկվում էին հոգևոր հարցեր: Միաժամանակ գրում է տեքստեր արխալոգիկ երգերի համար: Որոշ ժամանակ հետո դառնում է հարուստ և ճանաչված մարդ, բայց շարունակում է որոնել ինքն իրեն, փնտրել իր տեղը կյանքում:

Ապա աշխատում է որպես լրագրող, փորձում ուժերը ռեժիսուրայի և դրամատուրգիայի ասպարեզում: Նրա ստեղծագործությունների թեմաները գրավում տեղական իշխանությունների ուշադրությունը: Նրան սկսում են մեղադրել հակապետական գործողությունների մեջ և 3 անգամ ձերբակալում են՝ ենթարկելով տանջանքների:

Դուրս գալով բանտից՝ նա դադարում է գրել, փորձում է իրեն CBS RECORDS-ում : Բայց մի օր նրան հեռացնում են՝ առանց բացատրությունների: Եվ նա մեկնում է Ճամբորդության: Պատահական մի հանդիպում Ամստերդամում նրան տանում է կաթոլիկ միաբանություն, որտեղ նա սկսում է հասկանալ նշանների և կանխագուշակությունների լեզուն, որոնք ամեն քայլափոխի հանդիպում են մեր ճանապարհին: Համաձայն ճանապարհագնացության արարողության՝ միաբանությունը նրան ուղարկում է ուխտագնացության: Հաղթարելով ուխտագնացների հերոսական ճահապարիճ՝ նա հետագայում այդ մասին գրում է իր 1-ին գրքում՝ «Ուխտագնացություն» վերնագրով: Սրան հաջորդում է 2-րդը՝ «Ալքիմիկոսը», որը նրան մեծ ճանաչում է բերում:

Այսօր Կոելյոն համաշխարհային հռչակ վայելող գրող է , որի ստեղծագործությունները թարգմված են 56 լեզուներով և մոտ 140 երկրներում նա համարվում է ամենաշատ ընթերցվող գրողներից: Նա Իտալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Չեռմանիայի և այլ երկրների կողմից արժանացել է մի շարք բարձրագույն հեղինակավոր պարգևների:

Կոելյոյի գրքերը ընթերցողի ուշադրությունը գրավում են նախ և առաջ նրանով, որ հեղինակը արժարժում է հավերժական հարցեր. նրա հերոսները ջանում են պահպանել սերը, երազանքը իրականություն դարձնել, հասկանալ, թե որն է մարդու առաքելությունը այս կյանքում:

Նարգիզն ու առուն իրենց ողջ կյանքը վատնեցին ինքնահիացման վրա: Ուրիշ ոչինչ նրանց չէր գրավում և չէր հետաքրքրում. նշանակում է նրանք իրենց կյանքը ապրեցին աննպատակ, անիմաստ:

Իսկ ո՞րն է կյանքի իմաստը, ի՞նչ եք կարծում: Այսօր մենք պետք է գտնենք այդ հարցի պատասխան, և մեզ դրանում կօգնի «Ալքիմիկոսը» վեպը: Ի՞նչի մասին է վեպը:

Ճակատագրի, ճշմարտության որոնման և հայտնաբերման, բարեկամության, սիրո ու հոգու հարստության մասիր է :

Ով է վեպի գլխավոր հերոսը՝ Սանտյագոն:

Սանտյագոն երիտասարդ իսպանացի է, որ մինչև 16-ը լրանալը սովորել է ձեմարանում , որտեղ ուսանել է լատիներեն, իսպաներեն, աստվածաբանություն: Բայց մանկուց նրա մեջ հասունացող աշխարհընկալման ձգտումը հաղթում է Աստծո ճանաչման ցանկությանը: Եվ մի օր էլ, համարձակություն հավաքելով, նա ծնողներին ասում է, որ չի ուզում հազարավան լինել, այլ ուզում է ճամփորդել: Հոր փողերով գնում է ոչխարի հոտ և հոտի համար ջուր ու կեր փնտրելու նպատակով շրջում տեղից տեղ:

Նա գո՞հ էր իր կյանքից:

Այո, նրան դուր էր գալիս այդ կյանքը: Նա ծեռք է բերում շատ ընկերներ, սովորում հասկանալ երկրի և երկնքի նշանները, և այն, թե ինչ է իրեն սպասվում առջևում: Եվ այս ամենը հասկանալ նրան օգնում են իր իսկ ոչխարները:

Ի՞նչն է խաթարում նրա անդորրը, նրա այս հանգիստ կյանքը:

Նա 2 անգամ միևնույն երազն է տեսնում , և մի գնչուհի մեկնաբանում է նրա երազը՝ ասելով, որ նա կհայտնվի Եգիպտոսում և այնտեղ կգտնի իր գանձերը ու կհարստանա:

Իսկ Սանտյագոն պատրա՞ստ է գնալու իր գանձի հետևից:

Իհարկե, ո՛չ, նա չգիտի ինչպե՞ս այնտեղ հասնել և բացի այդ փող չունի:

Իսկ ո՞վ է Մելխիսեդեկը: Ինչու՞ է նա հայտնվում Ս.-ի կյանքի ճանապարհին:

Մելխիսեդեկը Սալիմի արքան է :Նա հայտնվում է այն ժամանակ, երբ երիտասարդը փորձում է հետ կանգնել իր ճանապարհից. նա հիասթափվել էր իր երազներից և գնչուհու գուշակությունից:

Ինչպե՞ս է Մելխիսեդեկին հաջողվում համոզել Ս.-ին:

Մելխիսեդեկը ասում է, որ յուրաքանչյուր մարդ կարող է կերտել իր առասպել-ը , և մարդուն այդ հնարավորությունը տրվում է մեկ անգամ միայն: Իսկ այս մոլորակում մի մեծ ճշմարտություն կա. անկախ նրանից, թե ով ես դու և ինչ ես անում, եթե իսկապես մի բան ցանկանում ես, հասնում ես դրան, քանի որ այդ ցանկությունը հղացվել է Տիեզերքի հոգում: Եվ հենց դա է մարդու կոչումը՝ մը երկրի վրա:

Իսկ ինչու՞ է իր խորհրդի համար թագավորը նրա հոտի տասներորդ մասը ուզում:

Որովհետև աշխարհում ամեն բան իր գինն ունի:

Ինչու՞ Ս.-ն այնքան էլ գոհ չէ այս հանդիպումից:

Նրան հեշտ չէր բաժանվել այն ամենից, ինչին վարժվել էր՝ իր հոսից, Անդալուզիայի դաշտերից, մահուդագործի աղջականից: Բայց պետք էր ընտրություն կատարել այն բանի մեջ, ինչին վարժվել ես և նրա, ինչը ձգում է, քանի որ կյանքը ուզում է, որ հետևես սեփական Առասպելիդ:

Ի՞նչ նվեր է տալիս թագավորը բաժանման պահին:

Նա տալիս է 2 քար՝ Ուրիմ և Թուրիմ՝ սև ու սպիտակ, որոնք կօգնեն Ս.-ին, երբ նա նախանշաններից գլուխ հանի: Եվ Ս.-ն չպետք է մոռանա, որ աշխարհում ամեն ինչ մի ամբողջություն է, չպետք է մառանա նախանշաններին հետևել և, որ ամենակարևորն է, չմառանա, որ պետք է մինչև վերջ գնալ սեփական Առասպելի հետևից:

Ի՞նչ պատմություն է պատմում Մելխիսեդեկը և ինչու՞:

Նա պատմում է թեյի գդալի և 2 կաթիլ յուղի մասին: Պատմության հերոսն այն-պես պետք է աներ, որ և՛ շուրջը կարողանար տեսնել, և՛ միևնույն ժամանակ գդալում եղած 2 կաթիլ յուղը չթափեր: Սրա խորհուրդն այն է, որ երջանկութ-յունը նրա մեջ է, որ կարողանաս տեսնել այն ամենը, ինչով հրաշալի ու փառահեղ է աշխարհը, և այդ միջոցին երբեք չմոռանաս թեյի գդալում եղած երկու կաթիլ յուղը, այսինքն՝ այն, ինչ դու ունես:

Ինչու՞ են Ս.-ի ճանապահին հանդիպում քաղցրավենիք և բյուրեղապակի վաճառողները:

Առաջին հերթին Ս.-ին կողոպտել էին, և նա, նրանց օգնելով, կարող էր հաց վաստակել, երկրորդ՝ լավ հնարավորություն էր ծանոթանալ այն մարդու հետ, որը գտել էր իր տեղը կյանքում, և այն մարդու, որ հրաժարվել էր իր երազանքը իրականություն դարձնելուց:

Ինչու՞ է Ս.-ն մնում աշխատելու հենց բյուրեղապակե վաճառի մոտ:

Նա խորհուրդ ունի տալու Ս.-ին, Ս.-ն նրանից բան ունի սովորելու:

Ի՞նչ է սովորում Ս.-ն բյուրեղապակի վաճառողի մոտ:

Նա սովորում է այդ գործի բոլոր նրբությունները և հիմա ինքը կարող է նման կրպակ բացել, սովորում է արաբերեն և կարողանում է ազատ խոսել, բացի այդ՝ աշխատում է այնքան գումար, կարող էր 2 անգամ ավել ոչխար առնել, քան ուներ:

Ինչու՞ վերադարձավ Իսպանիա: Ի՞նչը նրան օգնեց շարունակել ճանապարհը:

Մելխիսեդեկի նվիրած երկու քարերը, որոնք երիտասարդին անընդհատ հիշեցնում են նրա խոսքերը, թե երբեք մի՛ հրաժարվիր քո երազանքից, հետևի՛ր նշաններին: Ս –ն հասկանում է, որ տուն դառնալ ինքը ամեն վայրկյան կարող է, բայց պետք է փորձի գտնել իրեն նախասահմանված գանձը:

Հաջորդ հերոսը, որ հանդիպում է Ս.-ի ճանապարհին, անգլիացին է : Ի՞նչ իմցանք նրա մասին:

Անգլիացին իր ողջ կյանքը նվիրել է նրան, որ հասկանա այն գլխավորը, ինչի

մասին ասում է Տիեզերքը: Սկզբում նա տարվել է էսպերանտոյով, ապա աշխարհի կրոններով, իսկ հետո՝ ալքիմիայով: Շատ բանի է հասել, բայց դեռ ալքիմիկոս չի դարձել: Նա այցելել է աշխարհի լավագույն գրադարանները, գնել ալքիմիային վերաբերող ամենաեզակի գրքերը, բայց այդպես էլ նրան չի հաջողվել հասնել կատարելության:

Ինչու՞ էր անգլիացին հայտնվել քարավանում:

Գրքերից մեկում նա կարդացել էր 200 տարի առաջվա մի արաբ ալքիմիկոսի մասին, որը հայտնաբերել էր Իմաստնության Քարը և Անմահության Ձուրը և հիմա ապրում է Էլ-Ֆայում օազիսում: Անգլիացին որոշել էր իր աչքով տեսնել նրան և դրա համար քարավանով գնում էր Սահարայով, որտեղ գտնվում էր որտեղ և գտնվում էր այդ օազիսը:

Ի՞նչ սովորեցին իրարից Ս-ն և անգլիացին: Ի՞նչ հասկացան նրանք:

Ամեն մարդ ունի իր ճանապարհը, և դրա համար էլ մեկը մյուսին կարող է չըհասկանալ:

Ո՞վ է Ֆաթիման .ի՞նչ հանգամանքներում են նրանք հանդիպում:

Ֆաթիման Էլ-Ֆայում ապրող մի աղջիկ է : Երբ Ս-ն և անգլիացին հայտնվում են օազիսում, նրանք սկսում են փնտրել ալքիմիկոսին: Նրանք հարցուփորձ են այն մարդկանց, ովքեր գալիս են աղբյուրի մոտ՝ ջրի: Այստեղ էլ Ս-ն ծանոթանում է նրա հետ:

Ինչու՞ Ֆաթիման չի պահում Ս-ն օազիսում:

Նրա համար կարևոր է, որ Ս-ն գտնի իրեն. միայն այդ դեպքում նրանք կարող են երջանիկ լինել:

Ս-ի վերջին և ճակատագրական հանդիպումը Ալքիմիկոսի հետ: Ինչպե՞ս Ալքիմիկոսը հասկացավ, որ Ս-ն այն մարդն է, ում ինքը սպասել է այսքան տարի:

Ս-ն տեսիլք է հայտնվում, և նա զգուշացնում է օազիսի առաջնորդներին մոտավուտ վտանգի մասին:

Ինչու՞ է ալքիմիկոսը պնդում, որ Ս-ն չմնա օազիսում, այլ շարունակի իր ճանապարհը:

Ալքիմիկոսը կանխագուշակում է նրա հետագա կյանքը:

Ինչպե՞ս է Ս-ն հաջողվում կերպարանափոխվել, դառնալ քամի: Ի՞նչ է դա նշանակում:

Ղա նշանակում է, որ նա հասել է Տիեզերքի հոգուն, սովորել է խոսել այդ լեզվով, և նա գիտեր՝ երբ մի բան շատ ես ցանկանում, ողջ Տիեզերքն է օգնում քեզ: Միայն մի բան է երազանքի կատարմանը խանգարում՝ անհաջողության սարսափը: Նա դարձել էր ալքիմիկոս:

Էլ ինչու՞ է Ս-ն շարունակում գանձերի որոնումը:

Ալքիմիկոսը նրան ասել էր, որ գանձը պետք է գտնել նրա համար, որպեսզի այն, ինչ դու հասկացել ու զգացել ես քո ճանապարհին, իմաստավորվի:

Ի՞նչ եք կարծում. ինչու՞ է նրա ճանապարհը իրեն տանում հենց դեպի բուրգերը:

Քանի որ բուրգերը

1. աշխարհի հրաշալիքներից մեկն են
2. իմաստության խորհրդանիշ են
3. հզորության խորհրդանիշ են
4. մարդկային կարողությունների խորհրդանիշ են

Հետևություններ

Ի՞նչ հետևություններ արեցիք՝ կարդալով «Ալքիմիկոս» վեպը:

Մարդը երջանիկ է այն ժամանակ, երբ հետևում է իր ճանապարհին, իր առասպելին, այսինքն՝ գտնում է իր տեղը կյանքում և իր կոչումը:

Ի՞նչ դասեր քաղեցիք վեպից:

1. Մարդը պետք է գնա իր երազանքի հետևից :
2. Ամեն մարդ իր ձևով է բացահայտում կյանքի ճշմարտությունը:
3. Երբ դու մի բան շատ ես ուզում, ամբողջ Տիեզերքը նպաստում է, որպեսզի այն կատարվի:
4. Ամեն ինչ կյանքում ունի իր գինը:
5. Սերը բախտի մի մասն է, այն խոչընդոտ չէ, այլ խթան:
6. Երբեք չմոռանալ այն մասին, ինչ դու ունես:

7. Կյանքը կյանքի է կոչում:

8. Երբեք չհուսահատվել, անվախ առաջ գնալ:

Որպես վերջաբան՝ ուզում եմ ասել, որ դուք երբեք չմոռանաք Նարգիզի հիասթափ պատմությունը: Թող այդ պատմությունը ձեզ հիշեցնի այն մասին, որ մարդու կյանքում կարող են լինել մի քանի ճանապարհներ. ո՞ր ճանապարհով գնալ, ինչի՞նք նվիրաբերել կյանքը, ինչպե՞ս այն ապրել. կախված է միայն ձեզնից:

Բայց եթե դուք գտնեք ձեր իսկական տեղը կյանքում և չվատնեք այն դատարկ բաների վրա, ձեր կյանքն իմաստավոր կդառնա: